ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<28>> հունիսի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի հունիսի 28-ին ժամը 15^{00}–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի, առաջին նստաշրջանի հերթական վերջին նիստի գումարման օր է սահմանված հունիս ամսի վերջին չորեքշաբթի օրը՝ 28.06.2023թ.:

Նիստին մասնակցում էին՝ <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ
10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,
11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱՋԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7. ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱՋԱՐՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու արտահերթ նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են համայնքի ավագանու այսօրվա հերթական նիստի օրակարգի, օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը անվանափոխելու մասին.
(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում, Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու համար համաձայնություն տալու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար համաձայնություն տալու, մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

7) Սպորտի բնագավառում ունեցած ակնառու նվաճումների համար Մեսրոպ Գալուստի Նիկոյանին և Վաղինակ Գվիդոնի Սիմոնյանին դրամական պարգևատրում տրամադրելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ին ժամը 15^{00}-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք առաջին նստաշրջանի հերթական՝ վերջին նիստի հետևյալ օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը անվանափոխելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

3) Հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում, Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու համար համաձայնություն տալու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար համաձայնություն տալու, մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

7) Սպորտի բնագավառում ունեցած ակնառու նվաճումների համար Մեսրոպ Գալուստի Նիկոյանին և Վաղինակ Գվիդոնի Սիմոնյանին դրամական պարգևատրում տրամադրելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-2:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը անվանափոխելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, համայնքի ավագանին նախորդ նիստին համաձայնություն է տվել Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ձերժինսկի փողոցը>> հայազգի ռազմական գործիչ, Հայաստանի զինված ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից, Հայաստանի պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, արմատներով Անի համայնքի Նորշեն գյուղից /նախկինում Խարկով/՝ Արկադի Տեր Թադևոսյանի անվամբ վերանվանելու համար:

Հիշեցնելու կարգով տեղեկացվեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 19-րդ կետի համաձայն՝ Նշանավոր որևէ անհատի անվամբ կարող է անվանակոչում կատարվել նրա մահվանից առնվազն 5 տարի հետո: Մինչև նշանավոր որևէ անհատի մահվան 5 տարին լրանալը՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը կամ անվանափոխումը կատարվում է համապատասխան համայնքի ավագանու որոշմամբ՝ այդ նպատակով անցկացված հանրային լսումների արդյունքների հիման վրա:

Ս.թ. հունիսի 26-ին Մարալիկ քաղաքում, համայնքապետարանի նիստերի դահլիճում, ինչպես նաև Անի համայնի ներքին ենթագոտու բնակավայրերում իրականացված հարցումների արդյունքներով, նշված հարցի վերաբերյալ անցկացված հանրային լսումների արդյունքներով բացարձակ մեծամասնությամբ հավանություն է տրվել փողոցի անվանափոխության առաջարկության վերաբերյալ:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՖԵԼԻՔՍ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ

հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի>> 4-րդ և 16--րդ կետի 2-րդ ենթակետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 26-ին Անի համայնքի Մարալիկ քաղաքում անցկացված հանրային լսումների արդյունքները.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ձերժինսկի փողոցը>> վերանվանել հայազգի ռազմական գործիչ, Հայաստանի զինված ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս, արմատներով Անի համայնքի Նորշեն գյուղից /նախկինում Խարկով/՝ Արկադի Տեր Թադևոսյանի անվամբ՝ **<<Արկադի Տեր-Թադևոսյան փողոց>>**:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-3:

3) Հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում, Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու համար համաձայնություն տալու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն, համայնքապետարանը նախաձեռնել է հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում, Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու գործընթաց, որի հարցում համապատասխան համաձայնություններ են ձեռք բերվել իրավասու պետական մարմինների հետ:

Համայնքապետարի կողմից նախընտրելի են համարվել իրականացնելու որոշման նախագծում նշված ծրագրերը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀՐԱՏԱՊ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով, կարևորելով համայքում տնտեսական սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ հրատապ լուծում պահանջ պետական ծրագրի շրջանակներում Անի համայնքի տնտեսական և սոցիալակա ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սույն որոշման հավելվածում նշված ծրագրեր իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին

Դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ սույն որոշման հավելվածո նախատեսված ծրագրերը հրատապ լուծում պահանջող պետական ծրագրում ընդգրկելու համար:

3. Հաշվի առնելով սույն որոշման հավելվածում ներառված ծրագրերի իրականացմա հրատապությունը, տալ համաձայնություն՝ ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթեր գնման գործընթացը, հրատապության հիմքով, իրականացնել մեկ անձից գնում կատարելու միջոցով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ
Անի համայնքի ավագանու 2023 թվական
հունիսի 28-ի թիվ 44-Ա որոշմա

ՀՐԱՏԱՊ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

	Ծրագրի անվանումը	Հիմնանորգման ենթակա փողոցների երկարությունը /մակերեսը/, կառուցվող մանկապարտեզի հզորությունը	Կարիքի հիմնավորում
1.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարկի հիմնանորոգում	7200 քառ. մ.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարկը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում
2.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի հիմնանորոգում	440 գծ. մ. /4500 քառ. մ/	Անի համայնքի Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հարևանությամբ գտնվող Հաղթանակի փողոցը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում
3.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր	360 գծ. մ.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյանի անվան փողոցը գտնվում է

	Թադևոսյանի անվան փողոցի հիմնանորոգում	/3845 քառ. մ/	քայքայված և անբարեկարգ վիճակում
4.	Անի համայնքի Մարալիկ քաղաքում մոդուլային տիպի մանկապարտեզի կառուցում	120 տեղ	Մարալիկ քաղաքի 0-6 տարեկան երեխաների թիվը կազմում է 498, որից համայնքային ենթակայության միակ մանկապարտեզ են հաճախում միայն 120-ը: Համայնքի 0-6 տարեկան 338 երեխա զրկված են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից: Նոր մանկապարտեզի կառուցման համար քաղաքի կենտրոնական մասում նախատեսված է 1500 քառ, մետր մակերեսով հողամաս: Անհրաժեշտ է կառուցել 120 տեղ հզորության մոդուլային տիպի մանկապարտեզ:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-4:

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի, 84-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթներով:

Մենք մեծ կարևորություն ենք տալիս համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը:

Խորհրդակցական մարմինները համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմիններ են, որոնց միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Նախատեսվում է ձևավորել համայնքի ղեկավարին կից թվով երկու Խորհրդակցական մարմիններ: Դրանք են.

1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման.

2) կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերիմարմիններ, որոնց ձևավորումը կարգավորվում է սույն որոշմամբ հաստատվող համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգով:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելվածը կցվում է արձանագրությանը

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-5:

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որոշման ընդունումը կարգավորվում է<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի N 2-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգի 22-րդ կետի դրույթներով:

Համաձայն ավագանու կանոնակարգի նախատեսված է ստեղծել հետևյալ հանձնաժողովները՝

1) կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով.

2) սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով.

3) իրավական հարցերի մշտական հանձնաժողով.

4) ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

5) ենթակառուցվածքներին, քաղաքաշինությանը և հողօգտագործմանը առնչվող հարցերի մշտական հանձնաժողով.

6) բնակարանային հարցերը ուսումնասիրող մշտական հանձնաժողով:

Սակայն, <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՑ, <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ և <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմում ընդգրկելու համար թեկնածություններ չեն առաջադրվել: Այսինք համայնքի ավագանին ներկայումս ունի հնարավորություն մշտական գործող հանձնաժողովներում ընդգրկել 9 անդամ: Օրենքով սահմանափակված է ավագանու անդամ համայնքի ղեկավարի և 1-ին տեղակալի հանձնաժողովներում ընդգրկումը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 12-ի N 2-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու կանոնակարգի 22-րդ կետը և հաշվի առնելով, որ համամայնի ավագանու <<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքի, <<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցության, <<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցության խմբակցությունների կողմից Անի համայնքի ղեկավարին համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմում ընդգրկելու համար թեկնածություններ չեն ներկայացվել.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023 թվականի
հունիսի 28-ի թիվ 46-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

1. Կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողով

Հանձնաժողովի նախագահ՝
ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆ
Հանձնաժողովի անդամներ՝
ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ
ՄԵՐԻ ԵՆՈՔՅԱՆ

2. Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողով

Հանձնաժողովի նախագահ՝
ԳԱԳԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Հանձնաժողովի անդամներ՝
ՌՈՒԶԱՆ ԱՐՇԱԿՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆ

3. Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

Հանձնաժողովի նախագահ՝
ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆ
Հանձնաժողովի անդամներ՝
ԺԻՐԱՅՐ ԱԼԵՔՅԱՆ
ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆ

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-6:

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար համաձայնություն տալու, մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը հաստատելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրել օգտագործման, որոշման հավելվածով սահմանված են մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը:

Նախագիծը ներկայացվում է՝ համայնքապետարան ստացված քաղաքացու դիմումի համաձայն:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 15/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,08855 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի 4-8-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով, որ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,08855 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու, մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը հաստատելու մասին.
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման հավելվածը կցվում է սույն արձանագրությանը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-7:

7) Սպորտի բնագավառում ունեցած ակնառու նվաճումների համար Մեսրոպ Գալուստի Նիկոյանին և Վաղինակ Գվիդոնի Սիմոնյանին դրամական պարգևատրում տրամադրելու մասին.

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է սպորտի բնագավառում ունեցած ակնառու նվաճումների համար Մեսրոպ Գալուստի Նիկոյանին և Վաղինակ Գվիդոնի Սիմոնյանին, որպես խրախուսանք, Անի համայնքի 2023 թվականի բյուջեից յուրաքանչյուր մարզիկին տրամադրել 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ պարգևատրում:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԱԿՆԱՌՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՍՐՈՊ ԳԱԼՈՒՍՏԻ ՆԻԿՈՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՂԻՆԱԿ ԳՎԻԴՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ, ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5 որոշումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, սպորտի բնագավառում ունեցած ակնառու նվաճումների համար Մեսրոպ Գալուստի Նիկոյանին և Վաղինակ Գվիդոնի Սիմոնյանին, որպես խրախուսանք, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 4727 (կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածից յուրաքանչյուր մարզիկին տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ պարգևատրում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-8:

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը նշեց, որ որոշմամբ նախատեսվում է Անի համայնքի 2023 թվականի բյուջեից 3900 000 ՀՀ դրամ դրամական օգնություն տրամադրել Անի համայնքի թվով 109 կարիքավոր ընտանիքների:

Որոշման ընդման համար հիմք է հանդիսացել կարիքավոր ընտանիքներց համայնքապետարան ներկայացված դիմումները և Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 26-ի եզրակացությունը:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի N 5 որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 26-ի եզրակացությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին տրամադրել 3900000 /երեք միլիոն ինն հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումների հավելվածները կցվում են արձանագրությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ- 11 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ---------- ---------- ----------

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ ---------- ---------- ----------

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ ---------- ---------- ----------

Ա. ՇԱԲՈՅԱՆ ---------- ---------- ----------

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Մ. ԵՆՈՔՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Արձանագրեց՝

<<28> հունիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար՝
Հ. Համբարյան _____